ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

20.08.2025Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երեւան

2025 թվականի օգոստոսի 20-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը, Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2025 թվականի մշտադիտարկման արդյունքների ներկայացում (44 անձի վերաբերյալ),

Օրակարգի հարցի մանրամասները ներկայացրեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Մինչև ընթացիկ արդյունքներին անցնելը, Տիգրանուհի Խալաֆյանը ներկայացրեց նախապես հաստատված ցանկում պաշտոնատար անձանց փոփոխությունները, հաշվի առնելով ուսումնասիրության ընթացքում տարբեր մարմիններում տեղի ունեցած կադրային փոփոխությունները: Տիգրանուհի Խալաֆյանը հավելեց, որ նորանշանակ պաշտոնատար անձանց պաշտոնավարման մեկ ամիսը լրանալուն պես կիրականացվի ուսումնասիրություն և հավելյալ կտեղեկացվի արդյունքների մասին:

Մշտադիտարկման արդյունքներով ներկայացվեց ընդհանուր 44 անձի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքներ: Անձանցից մի քանիսից ակնկալվում է պարզաբանումներ, որոնք ստանալուն պես կամփոփվի արդյունքները և կներկայացվի Հանձնաժողովին:

Մշտադիտարկման ուսումնասիրության արդյունքները ներկայացնելուց հետո Հանձնաժողովը որոշեց անհամատեղելիության պահանջների 2025 թվականի մշտադիտարկումն ամբողջությամբ ավարտելուց հետո արդյունքները հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

ՈՐՈՇԵՑ

1. Նորանշանակ անձանց պաշտոնավարման մեկ ամիսը լրանալուց հետո ուսումնասիրել և արդյունքները ներկայացնել Հանձնաժողովին:
2. Ակնկալվող պարզաբանումները պաշտոնատար անձանցից ստանալուց հետո ուսումնասիրությունն ամփոփել:
3. Անհամատեղելիության պահանջների 2025 թվականի մշտադիտարկումն ամբողջությամբ ավարտելուց հետո արդյունքները հրապարակել Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	**ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝	**ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝	**ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝	**ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**